ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ (1990—1993 թթ.)

Ռ. Լ. ԱԶԻԶԲԵԿՅԱՆ

1990 թ. օգոստոսի 23-ին Հայաստանի նորընտիր Գերագույն խորհրդի առաջին նստաշրջանն ընդունեց «Հռչակագիր Հայաստանի անկախության մասին», որով հանրապետության խորհրդարանը հռչակեց անկախ պետականության հաստատման գործընթացի սկիզբը[1]։ Հռչակագրի ընդունմամբ հայ ժողովրդի կյանքում պատմական նոր ժամանակաշրջանի սկիզբ դրվեց։ Սկսվեց ծանր փորձություններ ու անասելի դժվարությունների մի նոր փուլ՝ կապված հայոց անկախ պետականության կայացման գործընթացի հետ։ Խնդիրը, որ ծառացած էր նախկին ԽՍՀՄ-ի բոլոր հանրապետությունների առջև, իսկ Հայաստանում այն անհամեմատ ավելի էր բարդանում աղետալի դոտու բազմահազար փախստականների առկայության և Լեռնային Ղարաբաղի հիմնահարցի առնչությամբ։

1990—1993 թթ. ընթացքում Արցախում պատերազմը դնալով լայն ծավալներ ու դաժան բնույթ էր ընդունում, որը, բնականաբար, մեծ չափով անդրադառնում էր Հայաստանի Հանրապետության սոցիալ-քաղաքական կացության վրա։ Էլ ավելի էր սաստկանում նրա տնտեսական շրջափակումը, որին Ադրբեջանի հետ մեկտեղ, 1990-ական թվականների սկզբներից, ակտիվորեն մասնակցում էր նաև Թուրքիան։ Վերջինս արգելել էր իր տարածքով նույնիսկ մարդասիրական օգնության փոխադրումը Հայաստան, որն արտաքին աշխարհի հետ հիմնականում կապված էր միայն Վրաստանի տարածքով անցնող ճանապարհներով։ Սակայն Վրաստանում տիրող անկայուն քաղաքական իրավիճակի հետևանքով դրանք մեծ խափանումներով էին գործում։ Վրաստանում հաճախ թալանվում էին Հայաստանին հասցնելիք ուղերձները, պայթեցվում երկաթգծերն ու կամուրջները։

Հանրապետության կենսագործունեությանը հատկապես խոչընդոտում էր էներգետիկ ճգնաժամը։ Այն ավելի էր խորանում Թուրքմենստանից եկող գազատարի հաճախակի պայթեցումների հետևանքով, որոնք կատարվում էին Վրաստանի՝ հիմնականում ադրբեջանցիներով բնակեցված Մառնեուլի շրջանում։ Հայաստանի արդյունաբերական ձեռնարկությունները մշտապես էլեկտրաէներգիայի խիստ քաղց էին զգում և չէին կարողանում գործել լրիվ հզորությամբ։ Դրա հետևանքով 1993 թ. արդյունաբերական արտադրության ծավալը կազմեց 1987 թ. մակարդակի միայն 1/6-ը[2]։ Հանրապետության տնտեսության մյուս ճյուղերը ևս ըստ էության գտնվում էին կաթվածահար վիճակում։ Նույնիսկ խստաշունչ ձմռան պայմաններում Հայաստանի գրեթե ողջ բնակչությունը շուրջ երեք տարի զրկված էր էլեկտրաէներգիայից և ջեռուցումից։ Էներգետիկ ճգնաժամի խորացումն անհնար էր կասեցնել բերովի հումքի վրա գործող ՋԷԿ-երի և հիմնականում Սևանա լճի ջրային պաշարների հաշվին աշխատող ՀԷԿ-երի միջոցով, որոնց հզորությունները մի կերպ բավարարում էին կյանքի նվազագույն պահանջները։ Միայն 1993 թ. Սևանա լճից էներգետիկ նպատակներով օգտագործվեց շուրջ 1 մլրդ 643 մլն. խ. մ. ջուր, որի հետևանքով լճի մակարդակը 1992 թ. համեմատությամբ նվազեց 33 սմ-ով[3]։ Հետագայում Սևանից ջրի բացթողումը նման ինտենսիվությամբ շա-

---

1 Հայաստանի Հանրապետություն, 23. VIII. 1991։

2 Երկիր, 4. II. 1994։

3 Նույն տեղում, 11. II. 1994, Голос Армении, 8. II. 1994.

բունակելու դեպքում, լուրջ սպառնալիքի տակ կդրվի լճի գոյատևման հարցը։ Հանրապետության էկոլոգիական իրավիճակը խիստ սրվեց նաև աղետալի չափերի հասնող զանգվածային ծառահատումների հետևանքով։ Բնակչության որոշ մասը նման ապօրինի ճանապարհով փորձում էր ձմեռվա վառելիք ձեռք բերել, քանի որ, չնայած ամենամյա խոստումներին, պետության կողմից այդ խնդիրը օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով հիմնականում չէր լուծվում։

Վառելիքաէներգետիկ ծանր իրավիճակը չէր թեթևացնում նաև այլ երկրների կողմից որպես մարդասիրական օգնություն տրամադրվող սահմանափակ քանակությամբ վառելանյութի ներկրումը։ 1990-ական թվականների սկզբներին Հայաստանում բնակչության մեկ շնչի հաշվով էլեկտրաէներգիայի սպառման մակարդակը տարեկան կազմում էր 300 կվտ/ժամ՝ 1980-ականների 5000 կվտ/ժամի դիմաց[4]։ Ելնելով ստեղծված իրադրությունից, արդեն 1991 թ. վերջերին Հայաստանի Հանրապետության կառավարությունը ստիպված էր անդրադառնալու 1989 թ. փակված Հայկական ԱԷԿ-ի վերագործարկման հնարավորությունների խնդրին. որոշվեց 1994 թ. վերջերից այն վերադործարկել, որը կապված էր ֆինանսատեխնիկական լուրջ հիմնահարցերի հետ։

Տնտեսության նման կացությունը հանգեցրեց հանրապետության ազգային եկամտի խիստ կրճատման։ 1993 թ. այն 1991 թ. համեմատությամբ նվազեց 60—65 %-ով և կազմեց 1987 թ. մակարդակի միայն 10—15 %-ը[5]։ Մի խոսքով, քննվող ժամանակաշրջանում Հայաստանի Հանրապետությունը գտնվում էր խոր սոցիալ-տնտեսական ճգնաժամի մեջ, որը բացի օբյեկտիվ պատճառներից, պայմանավորված էր սուբյեկտիվ գործոններով։ Դրանց մեծ մասը դրսևորվեց դեռևս 1980-ական թվականների վերջերին, երբ հանրապետությունում ծավալված ազգային-ժողովրդավարական շարժման ղեկավարներն առաջնորդվելով քաղաքական նկատառումներով, կամա թե ակամա, փաստորեն, նպաստեցին տնտեսական ճգնաժամի հետագա խորացմանը։ Նրանց կողմից մասնավորապես միակողմանի ու անհեռատես մոտեցում ցուցաբերվեց կենսոլորտը աղտոտող արդյունաբերական ձեռնարկությունների փակման խնդրում։ Խոսքն առաջին հերթին վերաբերում է «Նաիրիտ» գիտաարտադրական միավորմանը, որը 1989 թ. դեկտեմբերին փակվեց։ Անշուշտ, կենսոլորտի մաքրության ապահովման տեսանկյունից այն դրական նշանակություն ուներ, սակայն հանրապետության տնտեսությունն ընկավ արտակարգ ծանր կացության մեջ։ «Նաիրիտը» ոչ միայն միջազգային շուկայում մեծ պահանջարկ վայելող թանկարժեք քլորոպրենային կաուչուկ արտադրող ԽՍՀՄ միակ ձեռնարկությունն էր, այլև հումքի մատակարարման յուրահատուկ էպիկենտրոն, որի շնորհիվ գործում էին հանրապետության շուրջ 350 ձեռնարկություններ[6]։ Ուստի նրա փակման հետևանքով Հայաստանը միլիարդների տնտեսական վնաս կրեց։ Միևնույն ժամանակ «Նաիրիտի» փակումը հանգեցրեց ծայրահեղ լարված սոցիալական իրավիճակի՝ կապված այդ միավորման և դրա գործունեությունից կախված ձեռնարկությունների աշխատակիցներին աշխատանքով, կենսաթոշակով, բնակարանով ապահովելու պրոբլեմի հետ։ Այս ամենը հարկադրեց հանրապետության նոր իշխանություններին՝ արդեն 1991 թ. կեսերին վերաբացել «Նաիրիտը»։ Սակայն այն մինչ այժմ էլ չի գործում իր ողջ հզորությամբ։

Ինքնին պարզ է, որ ժամանակին պետք էր ոչ թե փակել «Նաիրիտը», այլ կատարելագործել ու վերակառուցել նրա հնացած տեխնոլոգիան, ինչը կնպաստեր վնասակար արտանետումները թույլատրելի աստիճանին հասցնելուն։ Նման մոտեցում կարող էր ցուցաբերվել նաև Ալավերդու լեռնամետա-

---

4 Ազգ, 10. II. 1994։

5 Երկիր, 4. II. 1994։

6 Коммунист, 9. I. 1990.

լուրգիական կոմբինատի և Վանաձորի քիմիական գործարանի հանդեպ։ Վերջիններիս փակումը թեև նպաստեց հանրապետության էկոլոգիական իրավիճակի բարելավմանը, սակայն լուրջ հարված հասցրեց նրա տնտեսությանը, քանի որ այդ ձեռնարկությունները ԱՊՀ-ի և աշխարհի այլ երկրների հետ Հայաստանի տնտեսական կապերի զարգացման ու ամրապնդման բնագավառում էական կշիռ ունեին։

Հանրապետության տնտեսությունը շոշափելի հարված հասցրեցին նաև Ղարաբաղյան շարժման Հայաստանի կոմիտեի կազմակերպած երկարատև համազգային գործադուլները (1988—1989 թթ.)։ Վերջիններս, հետապնդելով քաղաքական նպատակներ, լուրջ սպառնալիք դարձան առաջին հերթին սեփական ժողովրդական տնտեսության քայքայման և մյուս կողմից՝ Միության տարբեր շրջանների հետ տնտեսական կապերի և համագործակցության խզման համար։ Հայաստանը մյուս հանրապետությունների (հետագայում նախկին պետությունների) և տնտեսական շրջանների համար դարձավ ոչ հուսալի գործընկեր, որպիսին պետք է փոխարինվեր այլ գործընկերներով։

Ինչպես նշված, այնպես էլ նմանօրինակ այլ գործոններ հասցրին Հայաստանի տնտեսական մեկուսացմանը և ճգնաժամի խորացմանը։

Ստեղծված իրավիճակը մեղմացնելու և փլուզվող տնտեսությունը վերակենդանացնելու նպատակով 1990-ականի սկզբներից Հայաստանի Հանրապետության իշխանությունները ձեռնամուխ եղան տնտեսական լայն բարեփոխումների իրագործմանը։ Սկսվեց շուկայական հարաբերությունների անցման գործընթացը։ Քննվող ժամանակաշրջանում հետևողականորեն իրականացվում էին ժողովրդական տնտեսության գրեթե բոլոր բնագավառների ձեռնարկությունների որոշ մասի ապապետականացմանն ու սեփականաշնորհմանը նպատակաուղղված միջոցառումներ։ Անշուշտ, իշխանություններն այդ քայլին դիմեցին կյանքի թելադրանքով, սակայն նրանք փաստորեն ճիշտ չգնահատեցին հանրապետության տնտեսության իրական հնարավորություններն ու առանձնահատկությունները, հաշվի չառան պատերազմական իրադրությունը, որը, թերևս, պահանջում էր ոչ թե սեփականաշնորհման ծավալում, այլ տնտեսության համակենտրոնացում։ Հիմնակետում առաջնորդվելով արտաբահմանյան մի շարք երկրների շուկայական հարաբերությունների մոդելը Հայաստանում շուտափույթ կիրառելու ձգտումով, իշխանությունների կողմից ըստ էության չմշակվեց հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացման հիմնավոր ու հստակ ծրագիր։ Մինչդեռ, ինչպես համաշխարհային փորձն է վկայում, անցումը շուկայական հարաբերություններին բավականին երկար ու բարդ գործընթաց է, որը պահանջում է տասնյակ տարիներն պետական կարգավորման համալիր ծրագրի իրականացում։ Հայաստանի համար այդ ճանապարհն ավելի դժվար էր, քանի որ այստեղ, ինչպես և նախկին ԽՍՀՄ-ի բոլոր հանրապետություններում, արտադրության համատարած պետականացման ու կենտրոնացման հետևանքով պարզ ապրանքային արտադրությունը և դրա հետ կապված հարաբերությունների մի ջավայրը վաղուց վերացված էին։ Տարիներ շարունակ բացառվել էին շուկայական հարաբերություններին յուրահատուկ բոլոր ձևերը, որոնց աստիճանական և լիարժեք կազմավորման պայմաններում միայն հնարավոր կլիներ անցնել շուկայական տնտեսությանը։ Փաստորեն տնտեսության այսպիսի տարբեր հիմքերն իրականում անհնար էր արագորեն համատեղել։ Ուստի, բնական էր, որ նման չհիմնավորված ծրագրի իրականացմանը նպատակաուղղված առաջին իսկ քայլերն էլ ավելի խորացրին սոցիալ-տնտեսական ճգնաժամը։ Դա հստակորեն ակնառու դրսևորվեց հոդի գրեթե համատարած սեփականաշնորհման ընթացքում։ 1991 թ. սկզբներին Հայաստանը ԽՍՀՄ նախկին սուբյեկտների շարքում առաջինը ձեռնամուխ եղավ այդ քայլին։ Հողը տրվեց նրա մշակին՝ գյուղացուն։ Սակայն իր էությամբ առաջադիմական այդ ձեռնարկումը իրականացվեց ոչ լավ նախապատրաստված և հապճեպորեն։ Ի հետևանս դրա, գրեթե լիովին քայքայվեց հանրապետության ագրոարդյունաբերական համալիրը։ Կրճատվեցին ցանքատարածությունները, պակասեց անասնագլխաքանակը, կազմալուծվեցին մեքենատրակտորային հավաքակայանները, անաս-

նապահական և թռչնաբուծական համալիրները։ Հողատեր գյուղացին առանց գյուղատնտեսական տեխնիկայի, նյութատեխնիկական մատակարարման, ագրոզոոտեխնիկական և այլ անհրաժեշտ ծառայությունների համակարգի հայտնվեց խիստ ծանր վիճակում։ Նվազեց գյուղատնտեսական մթերքների արտադրությունը և կտրուկ աճեցին դրանց գները։ Գրեթե նման իրավիճակում էր հայտնվել նաև արդյունաբերությունը։ Պետական հովանավորությունից զրկվելով, արդյունաբերական փոքր ու միջին ձեռնարկությունները փաստորեն չէին գործում, լիակատար փլուզման եզրին էր կանգնած ռազմաարդյունաբերական համալիրը։ 1992 թ. արդյունաբերական արտադրանքի արտադրության ծավալը կազմել էր նախորդ տարվա միայն 47,6 %-ը[7]։ Հիշյալ թվականի վերջին արդյունաբերության արտադրանքի ծավալով Հայաստանը իջել էր 1971 թ. մակարդակին[8]։ Դրան հակառակ, քննվող ժամանակաշրջանում զանազան մասնավոր ձեռնարկությունների, ընկերությունների ու ֆիրմաների անվան տակ սկսեցին կազմավորվել նորանոր մաֆիական խմբավորումներ, որոնց նպատակը ոչ այնքան տնտեսության զարգացումն ու մրցակցային առողջ պայքարն էր, որքան արհեստական ճանապարհով գների բարձրացումն ու պետական սեփականության յուրացումը։ Դեֆիցիտային էկոնոմիկայի պայմաններում նման երևույթների զարգացումը հանգեցրեց աշխատավորական լայն զանգվածների (որոնք այդպես էլ չէին կարողանում հասկանալ, թե հանրապետությունը դեպի ինչ հասարակարգ է դնում) սոցիալական պաշտպանվածության երաշխիքների աստիճանական վերացմանն ու նրանց կենսամակարդակի անկմանը։ Մինչդեռ շուկայական հարաբերությունների անցումը նախ և առաջ պահանջում է պետական կարգավորման համապատասխան համակարգ, որով պետությունը ամբողջ ժողովրդի և ոչ թե նրա շատ փոքր խմբերի շահերից ելնելով պետք է լուծի կենսական նշանակության հրամնահարցերը։ Պետությունը պետք է ոչ միայն կարգավորի, այլև կառավարի անցման հետ կապված բոլոր գործընթացները։ Տնտեսական քաղաքականության մեջ շուկան նպատակ չէ, այլ հասարակական կյանքի բարելավման, ժողովրդի բարեկեցության բարձրացման միջոց։ Հետևապես, շուկայական հարաբերությունների անցումը պետք է կատարվի բարեկեցության բարձրացման և ոչ թե կենսապայմանների վատթարացման ճանապարհով, ինչը տեղի էր ունենում Հայաստանում։ Իշխանությունների հայտարարությունները տնտեսության զարգացման, գների կայունացման և բնակչության կենսամակարդակի սպասվող բարձրացման վերաբերյալ այդպես էլ մնում էին սոսկ որպես խոսքեր։ Տնտեսական անկման պայմաններում հաճախակի փոխվում էին կառավարությունները (1990—1993 թթ. ընթացքում հանրապետությունում փոխվեցին չորս վարչապետներ), իսկ շոշափելի տեղաշարժեր գրեթե չէին նշմարվում։ Ավելին, շարունակվում էր անկառավարելի շուկայական հարաբերությունների ծավալումը, որի հետևանքով գներն աննախադեպ աճում էին։ 1993 թ. սպառողական գների աճի տեմպերը Հայաստանում 130 %-ով գերազանցում էին միջին աշխատավարձի աճը[9]։ Սոցիալական ապահովության երաշխիքների դրեթե լիակատար բացակայությունը հանգեցրել էր ընչազուրկների շարքերի զանգվածային ստվարացմանը։ Տարեցտարի մեծանում էր գործազուրկների թվաքանակը։ 1993 թ. վերջին հանրապետությունում պաշտոնապես գրանցված էր 110,2 հազ. գործազուրկ[10]։ Հատկապես ծանր էր վիճակը աղետի գոտում։ Վերջինիս վերականգնման պետական ծրագրի բացակայության հետևանքով այստեղ վերականգնողական աշխատանքների վիճակը հեռու էր բավարար լինելուց։ Աղետի գոտում, որտեղ 1993 թ. ապրում էր հանրապետության բնակչության 25,2 %-ը[11], վերականգնված ձեռնարկությունների սակավության և

7 Մեր խոսքը, 29. IV. 1993։
8 Նույն տեղում։
9 Աղդ, 25. I. 1994։
10 Երկիր, 12. II. 1994։
11 Նույն տեղում։

շինարարական աշխատանքների ձգձգման պատճառով բավականին բարձր էր գործազրկության մակարդակը։ Նրան բաժին էր ընկնում Հանրապետությունում գրանցված գործազուրկների 34 %-ը[12]։ Սակայն, Հայաստանում պետականորեն գրանցված գործազուրկներից բացի, մեծ թիվ էին կազմում «թաքնված» գործազուրկները։ Արտադրական ձեռնարկությունների անկանոն և ոչ լիարժեք աշխատանքի հետևանքով անգործության էին մատնվում նաև դրանց աշխատողները։ 1993 թ. ընթացքում յուրաքանչյուր ամիս միայն տնտեսության պետական հատվածում զբաղվածների 12—15 %-ը (90—115 հազ. մարդ) գտնվել էր հարկադիր պարապուրդի մեջ, այդ թվում արդյունաբերության մեջ՝ 24—31 %-ը (71—82 հազ. մարդ)[13]։ «Թաքնված» գործազուրկները առկա էին նաև գյուղատնտեսության մեջ, որոնց թիվը քննվող ժամանակաշրջանում ավելացել էր սահմանամերձ շրջաններում ստեղծված պատերազմական իրավիճակի հետևանքով։ Եվ, վերջապես, գործազուրկների բավական ստվար բանակ գոյություն ուներ չզբաղված բնակչության (թափառականներ, «մանրավաճառներ» և այլն) ու բռնագաղթածների մեջ։ 1993 թ. Հայաստանում վերջիններիս թիվը հասնում էր 295 հազարի[14]։ Նկատի ունենալով բնակչության վերոհիշյալ խմբերին, համապատասխան մասնագետների կարծիքով «թաքնված» գործազուրկների թիվը Հայաստանում 1993 թ. տատանվում էր 250—350 հազարի սահմաններում[15]։ Նման պայմաններում բնակչության մի փոքր մասը ծավալելով առևտրավաշխառուական լայն գործունեություն, արագորեն հարստանում էր։ Անցյալի արատները՝ կոռուպցիան, կաշառակերությունն ու հովանավորչությունը, կրկին ծաղկում էին ապրում։ Հայաստանում օրըստօրե հզորանում էր մաֆիան, որը սերտաճել էր պետական կառույցների հետ։ Այն օգտվելով հանրապետությունում ստեղծված անպատժելիության մթնոլորտից, ոչ միայն աներևակայելի հարստություն էր դիզում, այլև հաճախ, ընդհուպ իսկ ֆիզիկական հաշվեհարդարի միջոցով, աւպարեզից հեռացնում էր իր համար անցանկալի դարձած անձնավորություններին։ Այս ամենը հանգեցնում էր բնակչության մեծ մասի սոցիալ-հոգեբանական և բարոյական անկմանը։ Մեծ չափերի հասավ արտագաղթը։ Ըստ անձնքներում, դպրոցներում, ներքին գործող մարմիններում հարցումներ և ընտրանի հետազոտություններ անցկացրած մասնագետների մեծամասնության կարծիքով, 1993 թ. Հայաստանից գաղթածների մոտավոր թիվը կազմում էր շուրջ 400—500 հազ. մարդ[16]։ Փաստորեն, հանրապետության բնակիչների շուրջ 1/7-ը գտնվում էր նրա սահմաններից դուրս։ Ընդ որում, հայրենիքը լքողների շարքում մեծ թիվ էին կազմում մտավոր բարձր կարողություններով օժտված, ինչպես նաև իրենց ձեռներեցությամբ աչքի ընկած շատ անհատներ։ 1990—1993 թթ. ընթացքում Հայաստանում նվազել էր ծննդաբերությունը և աճել մահացությունը։

Այս ամենի հետ մեկտեղ, 1990-ական թվականների սկզբներին դրեթե լիակատար փլուզման վտանգի առջև էր կանգնած նաև Հայաստանի ֆինանսավարկային համակարգը։ Չնայած հանրապետության իշխանությունների գործադրած ջանքերին, Հայաստանն այդպես էլ չընդգրկվեց ռուսական ռուբլու գոտու մեջ։ 1993 թ. նոյեմբերի վերջին հանրապետության կառավարությունը հարկադրված շրջանառության մեջ դրեց ազգային դրամ, որը անկախ պետականության գործնական արտահայտություններից մեկն էր։ Սակայն տնտեսական և քաղաքական երաշխիքների բացակայության պայմաններում այն շատ արագ արժեզրկվեց։ Դրա հետևանքով արժեզրկվեցին նաև տասնամյակների ընթացքում բնակչության խնայողությունները։ Հայաստանի Հանրապե-

12 Նույն տեղում։

13 Նույն տեղում։

14 Հայաստանի Հանրապետություն, 8. II. 1994։

15 Երկիր, 12. II. 1994։

16 Աղդ, 10. II. 1994։

տությունը թևակոխեց դերարժեղրկման, հետևաբար և սոցիալ-տնտեսական ճգնաժամի առավել խորացման մի նոր փուլ։

Քննվող ժամանակաշրջանում զգալի փոփոխություններ կատարվեցին նաև Հանրապետության ներքաղաքական կյանքում։ Իշխանությունները որոշակի քայլեր ձեռնարկեցին հասարակական կյանքի ժողովրդավարացման ուղղությամբ։ Այս առումով կարևոր նշանակություն ուներ 1991 թ. փետրվարի 26-ին խորհրդարանի ընդունած «Հասարակական-քաղաքական կազմակերպությունների մասին» օրենքը[17], որով, փաստորեն, Հանրապետությունում ստեղծվեց բազմակուսակցական համակարգ։ Վերջինիս շնորհիվ երկարամյա ընդմիջումից հետո, վերստին հայրենիքում ազատորեն գործելու իրավունք ստացան ազգային ավանդական Սոցիալ-դեմոկրատ Հնչակյան, Հայ Հեղափոխական Դաշնակցություն և Համավար Ազատական կուսակցությունները։ Հանրապետությունում գրանցվեցին նաև այլ կուսակցություններ, որոնց թիվը 1993 թ. վերջին հասնում էր 32-ի[18]։ Նրանց բոլորին իրավունք տրվեց օրենքի սահմաններում ազատորեն արտահայտելու իրենց տեսակետները։

Շուտով խորհրդարանում ձևավորվեցին տարբեր կուսակցական պատգամավորական խմբակցություններ։ Սակայն վերջիններս մեծ մասամբ համալրվում էին ժամանակին ՀՀՇ-ն ու կոմկուսը ներկայացնող պատգամավորներով։ Փաստորեն, 1990 թ. մայիսին կայացած ընտրությունների արդյունքներով հիմնականում վերը նշված երկու կուսակցությունների ներկայացուցիչներից կազմված խորհրդարանը ինքնաբերաբար վերածվեց բազմակուսակցականի։ Ուստի, արդեն իսկ 1992—1993 թթ. ակնհայտ էր դարձել նոր խորհրդարանական, բազմակուսակցական ընտրությունների անհրաժեշտությունը։ Մանավանդ, որ այդ մասին դեռևս 1990 թ. ընտրարշավի ժամանակ բազմիցս հայտարարել էին պատգամավորության թեկնածուների մեծ մասը։ Սակայն ընտրությունների վերաբերյալ նոր օրենքի բացակայությունը ոչ միայն անհնար էր դարձնում դրա իրագործումը, այլև թույլ չէր տալիս ընտրողներին նույնիսկ հետ կանչելու իրենց չարդարացրած կամ էլ վարկաբեկված պատգամավորներին։ Այդուհանդերձ, քննվող ժամանակաշրջանում Հայաստանի Գերագույն խորհուրդը որոշակի աշխատանք կատարեց Հանրապետության տնտեսական հարաբերությունների կարգավորմանը, սոցիալական իրավիճակի բարելավմանն ու պետականության ամրապնդմանը նպատակաուղղված օրենքների ու որոշումների մշակման և ընդունման ասպարեզում։ Դրանցից կարևորներից մեկը 1991 թ. մարտի 1-ի որոշումն էր՝ ԽՍՀՄ կազմից դուրս անկախ պետություն ստեղծելու վերաբերյալ նույն թվականի սեպտեմբերի 21-ին հանրաքվե անցկացնելու մասին[19]։ Հայաստանի Հանրապետությունը մինչև հանրաքվեն այդպես էլ չմասնակցեց Մոսկվենական նոր պայմանագրի մշակման աշխատանքներին, ինչը նախկին ԽՍՀՄ-ի կենտրոնական իշխանություններին առիթ տվեց սաստկացնելու բռնությունները Ղարաբաղում (1991 թ. ապրիլ-հունիս ամիսների ընթացքում նրանց ռազմական աջակցությամբ ադրբեջանցիները գրավեցին ու լիովին հայաթափեցին Գետաշենը, Մարտունաշենն ու Արցախի մի շարք այլ գյուղեր) և չհայտարարված տնտեսական պատժամիջոցների կիրառումը Հայաստանի նկատմամբ (հատկացվող նյութական, տեխնիկական, ֆինանսական ֆոնդերի խիստ կրճատում, շրջափակման ուժեղացման նպաստում և այլն)։ Այս առումով նշենք, որ այդ ժամանակ արդեն թերևս ակնհայտ էր, որ ԽՍՀՄ կայսերապետությունը դատապարտված էր փլուզման և վերափոխման, իսկ Հայաստանը յուրահատուկ պատճառներ ուներ (ամենակարևորը՝ Լեռնային Ղարաբաղի հիմնահարցը) չսրելու հարաբերությունները կենտրոնի հետ։ Մանավանդ, որ միջազգային ճնշման պայմաններում Հանրապետությունը լուրջ հնարավորություններ ուներ ամրապնդելու պետական անկախացման սեփական կովանները։ Մինչդեռ Հայաստանի

---

17 Հայաստանի Հանրապետություն, 20. VII. 1991։

18 Տվյալը վերցված է ՀՀ արդարադատության նախարարությունից։

19 Երեկոյան Երևան, 5. III. 1991։

իշխանությունների որդեգրած՝ կենտրոնի հետ թեկուզև «դեմոկրատական» առճակատման խորացման քաղաքականությունը և Խորհրդային կայսրության փլուզման գործընթացում առաջամարտիկ լինելու ձգտումը լուրջ հետևանքներ ունեցան հայ ժողովրդի համար։ Նախկին Միության հանրապետություններից և ոչ մեկը չնվաճեց իր անկախությունը համառ պայքարում, այլ այն փաստորեն նրանց տրվեց ստեղծված միջազգային քաղաքական իրադրության հետևանքով։ Այդ հանրապետությունների մեծ մասը, ի տարբերություն Հայաստանի, անկախացավ համեմատաբար ավելի քիչ կորուստների գնով։

1991 թ. սեպտեմբերի 21-ին Հայաստանի բնակչության ձնշող մեծամասնությունը՝ շուրջ 2 մլն 43 հազ. մարդ (քվեարկության իրավունք ունեցողների 94.39 տոկոսը), «այո» ասաց անկախությանը[20]։ Նույն թվականի սեպտեմբերի 23-ին Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհուրդը Հայաստանը հռչակեց անկախ պետություն[21]։

1991 թ. հոկտեմբերի 16-ին Հայաստանում առաջին անգամ անցկացվեցին նախագահական համաժողովրդական ընտրություններ։ Հանրապետության նախագահ ընտրվեց Լևոն Տեր-Պետրոսյանը[22]։ Շուտով խորհրդարանը իր իրավասությունների մի մասը հանձնեց նախագահին և հանրապետությունում ձևավորվեց նախագահական կառավարման համակարգ։ Վերջինիս ամրապնդմանը զուգընթաց աստիճանաբար կազմավորվում էր նաև ընդդիմությունը, որի մեջ մտնում էին Հայ Հեղափոխական Դաշնակցություն, Ռամկավար Ազատական, Դեմոկրատական, Հանրապետական, Ազգային Ինքնորոշում միավորում, Ազգային ժողովրդավարական միություն և այլ կուսակցություններ։ Ընդդիմությունը շատ հարցերում միաձույլ չէր, սակայն հետզհետե խորանում էին տարաձայնությունները նրա և իշխանությունների միջև։ Դրանցից ամենահիմնականը՝ 1991 թ. սեպտեմբերի 2-ին իրեն անկախ հռչակած Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ճանաչման հարցն էր[23]։ Ընդդիմությունը պահանջում էր, որպեսզի Հայաստանի Հանրապետությունը պաշտոնապես ճանաչի ԼՂՀ-ն, որն ըստ նրա կնպաստեր վերջինիս միջազգային ճանաչմանը։ Մինչդեռ իշխանությունները, զգուշանալով հայ-ադրբեջանական հակամարտության հետագա խորացումից և Հայաստանի պատերազմի մեջ ներքաշվելուց, հրաժարվում էին դրանից։

Գնալով ուժեղանում էր ընդդիմության դժգոհությունը նաև իշխանությունների վարած սոցիալ-տնտեսական ու հատկապես կադրային քաղաքականությունից։ Այն ավելի ու ավելի վճռականորեն էր պահանջում իշխանությունների հրաժարականն ու ազգային համաձայնության (բազմակուսակցական) կառավարության ստեղծում։ Սակայն իշխանությունները ոչ միայն մերժում էին այդ պահանջը, այլև հետևողականորեն շարունակում պետական դրեթե բոլոր կարևոր պաշտոններում նշանակել հիմնականում ՀՀՇ-ի ներկայացուցիչներին, որոնցից շատերը չունեին համապատասխան մասնագիտական որակավորում։ Ըստ էության, Հայաստանում աստիճանաբար ուրվագծվում էր նախկինի նման՝ միակուսակցական իշխանության հաստատման միտումը։ Այս ամենն առաջացնում էր ժողովրդի մեծ մասի խոր հիասթափությունն ու նրա մեջ սերմանում անտարբերություն քաղաքական շարժումների նկատմամբ։ Ըստ ՀՀ ԳԱԱ սոցիոլոգիական հետազոտությունների կենտրոնի՝ 1993 թ. դեկտեմբեր ամսին Երևանում անցկացրած հարցման արդյունքների՝ մայրաքաղաքի բնակչության միայն 3 %-ն էր համակրում իշխող քաղաքական կազմակերպությանը՝ ՀՀՇ-ին, իսկ կոմունիստական կուսակցությանը՝ 13,7, Հայ Հեղափոխական Դաշնակցությանը՝ 11,3, Ազգային Ինքնորոշում միավորմանը՝ 3, Ռամկավար Ազատական կուսակցությանը՝ 2, Դեմոկրատական կուսակցու-

---

20 Հայաստանի Հանրապետություն, 24. IX. 1991։

21 Նույն տեղում։

22 Նույն տեղում, 12. XI. 1991։

23 Նույն տեղում, 3. IX. 1991։

թյանը՝ 1,7 %-ը[24]։ Ուշագրավ է, որ հարցման մասնակիցների մոտ կեսը (48,3 %-ը) չէր համակրում և ոչ մի կուսակցության, իսկ 15 %-ը դժվարացել էր պատասխանել այդ հարցին[25]։

Հայաստանի տնտեսական իրավիճակի կայունացման և քաղաքական ու սոցիալական լարվածության մեղմացման կարևորագույն գրավականը կարող էր դառնալ հանրապետության Հիմնական օրենքի (Սահմանադրության) ընդունումը։ 1992—1993 թթ. ընթացքում որոշակի աշխատանք կատարվեց այդ ուղղությամբ։ Ստեղծվեց Գերագույն խորհրդի սահմանադրական հանձնաժողով՝ հանրապետության նախագահի գլխավորությամբ, որը 1993 թ. վերջերին համաժողովրդական քննարկման ներկայացրեց Հիմնական օրենքի նախագիծը։ Վերջինիս հիմքում ընկած էր ուժեղ նախագահական հանրապետության գաղափարը։ Սահմանադրության ընդունման հարցը գլխավորն աշխուժացրեց Հայաստանի ներքաղաքական կյանքը։ Հասարակական-քաղաքական կազմակերպությունները թեև տարբեր, հաճախ նույնիսկ իրարամերժ դիրքորոշում ունեին դրա ընդունման կարգի և մշակման սկզբունքների նկատմամբ, սակայն մեծ եռանդով ձեռնամուխ եղան Հիմնական օրենքի իրենց տարբերակների ստեղծմանը։ Կատարյալ, ազգային, ժողովրդավարական Սահմանադրության գաղափարի շուրջ համախմբվելով, վեց ընդդիմադիր կուսակցություններ (ՀԱԺԿ, ՀՀԿ, ՀՀԴ, ՀԴԿ, ՀՌԱԿ և ՍԻՄ) կազմեցին Քաղաքացիական համաձայնության Սահմանադրության խորհուրդ։ Վերջինս ընդհանրացնելով այդ կուսակցությունների մտակառույցները, մշակեց Հանրապետության Հիմնական օրենքի միասնական նախագիծ, որտեղ դրվագվում է խորհրդարանական հանրապետության գաղափարը։

Այսպիսով, Սահմանադրության հարցում հասարակության մեջ գոյություն ունեին լուրջ տարաձայնություններ, որոնց հետևանքով ձգձգվում էր նրա ընդունումը և հանրապետության տնտեսական ու քաղաքական կյանքը շարունակվում էր կառավարվել հիմնականում հրամանագրերի ու կարգադրությունների միջոցով։

1991 թ. դեկտեմբերին ԽՍՀՄ-ի փլուզումով և ԱՊՀ-ի ստեղծումով (նախկին միութենական հանրապետություններից առաջինը Հայաստանը հայտարարեց նրան միանալու իր պատրաստակամության մասին) սկսվեց Հայաստանի Հանրապետության համընդհանուր միջազգային ճանաչումը։ 1992 թ. մարտի 2-ին այն դարձավ ՄԱԿ-ի լիիրավ անդամ։ Արդեն 1993 թ. վերջին Հայաստանը դիպլոմատիկական հարաբերություններ էր հաստատել աշխարհի 89 երկրների հետ[26]։ Այս ամենը նպաստեց Լեռնային Ղարաբաղի հիմնահարցը միջազգային հանրության և հեղինակավոր կազմակերպությունների քննարկման առարկա դարձնելուն։ Այդ քննարկումների ընթացքում Հայաստանի Հանրապետության կողմից առաջնային պլան էին մղվում ԼՂՀ-ն որպես հակամարտության կողմ ճանաչելու (Ադրբեջանը դա չէր ընդունում և փորձում էր արցախյան պատերազմը ներկայացնել որպես հակամարտություն իր և Հայաստանի միջև), ռազմական գործողությունների դադարում երկարաժամկետ ինդադարար հաստատելու, խաղաղարար բանակցություններ սկսելու, ԼՂՀ-ի ու Հայաստանի շրջափակումը վերացնելու հարցերը։ Եվ միայն դրանք իրագործելուց հետո պետք է քննարկվեր Լեռնային Ղարաբաղի քաղաքական կարգավիճակի խնդիրը։ Սակայն Ադրբեջանը հետևողականորեն մերժում էր այդ պահանջները և համառորեն փորձում արցախյան հիմնահարցը լուծել ուժի դիրքերից։

Չգուշանալով ղարաբաղյան հակամարտության միջազգայնացումից, 1992 թ. մարտի 24-ին ԵԱՀԽ-ն ընդունեց որոշում, ըստ որի Լեռնային Ղարաբաղի կարգավիճակը պետք է քննարկվի Մինսկում կազմակերպվելիք խորհրդաժողովում։ Մինչ այդ հակամարտող կողմերին առաջարկվեցին զինա-

---

24 Երկիր, 5. II. 1994։

25 Նույն տեղում։

26 Տվյալը վերցված է ՀՀ արտաքին գործերի նախարարությունից։

դադարի հաստատման մի քանի ծրագրեր՝ ժամանակացույցեր։ Թեև վերջիններս պարունակում էին հայկական կողմի համար մի շարք անընդունելի դրույթներ, որոնցից ամենահիմնականները՝ լեռնային Ղարաբաղը Ադրբեջանի տարածք և Հայաստանը հակամարտող կողմ համարելն էր, այդուհանդերձ, դրանց մեծ մասը Հայաստանի Հանրապետության և ԼՂՀ-ի կողմից ընդունվեց։ Ղարաբաղյան հակամարտության վերաբերյալ մի քանի բանաձևեր ընդունեց նաև ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը, որը կողմերին կոչ արեց ընդունել ԵԱՀԽ-ի ժամանակացույցերը և դադարեցնել արյունահեղությունը։ Սակայն Ադրբեջանի միմյանց հաջորդող իշխանություններն օգտվելով Թուրքիայի բացահայտ հովանավորությունից, մերժում էին խնդրի քաղաքական մեթոդներով կարգավորմանը նպատակաուղղված ամեն մի միջնորդական փորձ և ձգտում անպայման պատերազմի մեջ ներքաշել Հայաստանի Հանրապետությանը։ Հենց այդ նպատակով էլ Ադրբեջանը չընդունելով ԵԱՀԽ-ի ժամանակացույցերը, ոչ միայն խափանեց Լեռնային Ղարաբաղի ԵԱՀԽ-ի Մինսկի խմբի ջանքերը, այլև գործնականում պաշտոնապես հայտարարեց իր կողմից ՄԱԿ-ի ԱԽ-ի բանաձևերի մերժումը։ Այս ամենի հետևանքով ռազմական գործողություններն Արցախում ավելի էին սաստկանում։

Ադրբեջանցի սադրիչները իրենց ռազմական հենակետերից և օդուժի միջոցով մշտապես հրթիռահրետակոծում ու ռմբակոծում էին Արցախի բնակավայրերը, պատճառելով մեծ ավերածություններ ու մարդկային զոհեր։ Նպատակ ունենալով ապահովել խաղաղ բնակչության անվտանգությունը, 1992 թ. փետրվար-մայիս ժամանակահատվածում ԼՂՀ-ի ինքնապաշտպանության ուժերը ոչնչացրեցին հակառակորդի խոշոր ռազմական հենակետերը Խոջալուում, Շուշիում, Լաչինում և դրանով իսկ ճեղքելով գրեթե հինգ տարի տևող լիակատար շրջափակման օղակը, դուրս եկան Հայաստանի Հանրապետության սահմանը։ Լաչինի մարդասիրական միջանցքով սկսվեց սննդամթերքի, վառելանյութի և այլ անհրաժեշտ ապրանքների առաքումը սովի և սոցիալ-տնտեսական անասելի ծանր պայմաններում ազգային-ազատագրական պայքար մղող արցախահայությանը։ Սակայն 1992 թ. հունիսին ադրբեջանական բանակը մի շարք օտարերկրյա տերությունների ռազմական աջակցությամբ լայնածավալ հարձակում ձեռնարկեց Արցախի հյուսիսում, որի հետևանքով թշնամու կողմից գրավվեց ու հայաթափվեց Շահումյանի շրջանը, ինչպես նաև Մարտակերտի շրջանի մեծ մասը։ Բռնազավթվեց Ղարաբաղի տարածքի 40 %-ը[27]։ Դեպքերի նման ընթացքն ինչ-որ չափով պայմանավորված էր նաև արտաքին հարաբերությունների մի շարք հարցերի նկատմամբ Հայաստանի Հանրապետության իշխանությունների սկզբնական շրջանում որդեգրած ոչ միշտ դիրքորոշմամբ։ Դա բխում էր ՀՀՇ-ի դեռևս 1980-ական թվականների տեսաբանների կողմից առաջ քաշված որոշ դրույթներից։ Վերջիններից թերևս ամենահիմնականը՝ հայ ժողովրդի պատմության ընթացքում ձևավորված շուրջ 300-ամյա ռուսական կողմնորոշման վերանայումն էր[28]։ Այն հիմնավորվելով սեփական ուժերին ապավինելու անհրաժեշտության ճշմարտացի գաղափարով, ենթադրում էր հարևան պետությունների հետ հավասարապես հաստատել բնականոն հարաբերություններ։ Ընդ որում, առաջնային պլան էր մղվում «վերափոխված» ու «դեմոկրատական» Թուրքիայի և Հայաստանի միջև սերտ համագործակցության տարբերակը, հանուն որի նույնիսկ փորձ էր արվում զոհաբերել Հայ դատը։

Անշուշտ, անմիջական հարևանների հետ բնականոն հարաբերությունների հաստատման սկզբունքը որևէ առարկության չի կարող հանդիպել։ Սակայն դա ամենևին չի նշանակում, թե այն պետք է իրականացվի ի վնաս մյուս

---

27 Հայաստանի Հանրապետություն, 5. II. 1994։

28 Ռ. Իշխանյան, Երրորդ ուժի բացառման օրենքը (Որն է մեր ճանապարհը, Երևան, 1990, էջ 93—115), Վազգեն Մանուկյան, Գնացքից թռչելու ժամանակն է (նույն տեղում, էջ 7—43), Կտրիճ Սարդարյան, Որն է մեր ճանապարհը (Պատմություն և իրականություն, Երևան, 1991, էջ 114—121) և այլն։

պնաությունների, տվյալ դեպքում Ռուսաստանի հետ ունեցած ավանդական հարաբերությունների։ Մանավանդ, ինչպես ցույց տվեց կյանքը, Թուրքիան ըստ էության չի փոխվել և նրա ձգտումը դեպի Թուրան, դեպի Թուրքալեզու ժողովուրդներով բնակեցված տարածքներում գերիշխանության՝ միշտ եղել է ու կմնա։ Ուստի, ակնհայտ է, որ Հայաստանի Հանրապետությունը առաջին հերթին պետք է կողմնորոշվի դեպի Ռուսաստան։ Վերջինիս հետ ռազմավարական գործակցության և բարեկամության ամրապնդման լուրջ հիմք ունենք՝ մեր երկու ժողովուրդներին ու պետություններին մտահոգող պանթուրքիստական աղգայնամոլությանը դիմագրավելու հարցում։ Դա բնավ էլ չի նշանակում, թե հայոց անկախ պետականության կայացումը պարզապես կախված է Ռուսաստանի հովանավորությունից։ Այն երբեք չի իրականանա, եթե հայ ժողովուրդը պետականություն ունենալու իր արժանավորությունը չկարողանա երաշխավորել սեփական ուժերով։ Այդ դեպքում թե՛ Ռուսաստանի և թե այլ երկրների հետ գործակցային հարաբերություններ հաստատելու ամեն մի հավակնություն ի վերջո կհանգի ձախողման։ Պատմությունը վկայում է, որ անկախության ուղի ոտք դրած փոքր պետությունները սովորաբար կողմնորոշվում են դեպի որևէ մեծ տերություն, նախ և առաջ հաշվի առնելով աշխարհագրական մերձակայությունը, քաղաքական, մշակութային ու հատկապես տնտեսական կապերի գերակայությունը։ Այս առումով նշենք, որ 1991 թ. դրությամբ (այսինքն մինչև ԽՍՀՄ-ի փլուզումը) Հայաստանը Ռուսաստանից ներմուծում էր սև մետաղ՝ 100, գունավոր մետաղ՝ 73,5, վառելիք՝ 100, հացահատիկ, ալյուր 77,3, շաքար՝ 62 %[29]։ Նույնիսկ այժմ, երբ Հայաստանի և Ռուսաստանի տնտեսական կապերը տարբեր պատճառներով զգալիորեն խաթարված են, այդուհանդերձ, մեր հանրապետությունում շոշափելիորեն զգացվում են Ռուսաստանի տնտեսական կյանքի տատանումները։ Վերջին ժամանակներս Հայաստանում անցկացված սոցիոլոգիական հարցումների արդյունքները վկայում են, որ Ռուսաստանը շարունակում է առաջատար տեղ զբաղեցնել այն երկրների ցանկում, որոնց հետ հայ ժողովուրդը որոշակի հույսեր է կապում։ Ուստի Ռուսաստանի հետ ռազմական, քաղաքական, տնտեսական ամուր կապեր հաստատելու անհրաժեշտությունը կասկած չի կարող հարուցել, մանավանդ, որ տարածաշրջանի իրադարձությունները մեկ անգամ ևս ապացուցեին երրորդ ուժի բացառման անբացառելիությունը։ Միաժամանակ, խիստ կենսունակ նշանակություն ունի նաև բարիդրացիական հարաբերությունների հաստատումը Իրանի, արաբական երկրների ու Վրաստանի հետ։ Նշենք, որ հետագայում հանրապետության իշխանությունները որոշակի դրական քայլեր ձեռնարկեցին ինչպես Ռուսաստանի, այնպես էլ նշված մյուս երկրների հետ փոխշահավետ հարաբերությունների հաստատման ուղղությամբ։

Հայաստանի Հանրապետության միջազգային հեղինակության վրա բացասաբար անդրադարձավ նաև Ղարաբաղյան շարժման Հայաստանի կոմիտեի կողմից առաջ քաշված «Մենք մշտական թշնամի ու մշտական բարեկամ չունենք» դրույթը, որով կարող էին առաջնորդվել հզոր տերությունները։ Առաջին հայացքից ճկուն դիվանագիտական խաղ թվացող և օտարներից փոխառնված այս թեզի ժամանակավրեպ օգտագործումը քաղաքական անհեռատեսություն էր, քանի որ դրանով իսկ հայտարարվում էր, թե Հայաստանը չի կարող հավատարիմ քաղաքական գործընկեր լինել ոչ մեկի համար։ Դրա հետևանքով նույնիսկ ավանդական դաշնակիցների կողմից անվստահություն դրսևորվեց մեր հանրապետության նկատմամբ։

ՀՀՇ-ի որոշ գաղափարախոսների կողմից ժամանակին առաջ քաշվեց նաև հայ ժողովրդի «համաշխարհային ազգ» լինելու թեզը[30]։ Ըստ երևույթին, այս-

---

29 Հայ-ռուսական և հայ-արաբական հարաբերությունները. նոյեմբերի 17—18-ը Երևանում կայացած գիտական նստաշրջանի նյութերը. Կոնսանդին Խուդավերդյանի զեկուցումը, Երևան, 1992, էջ 11։

30 Վազգեն Մանուկյան, նշվ. աշխ., էջ 18, 42։

տեղ նկատի էր առնվում մեր ժողովրդի աշխարհով մեկ ցրված լինելու հանգամանքը։ Բայց նման փաստերը բազմաթիվ են (հրեաներ, գերմանացիներ, չինացիներ և այլք), ուստի այս դրույթը միջազգային հանրության կողմից հիմնականում տեսվեց որպես ռասսայականության դրսևորում։ Նշենք, որ այն քննադատվեց նաև ՀՀ-ի մի շարք գործիչների կողմից։

Սուտով Հայաստանի Հանրապետության իշխանությունները հրաժարվեցին վերը նշված գրույթներից և սկսեցին վարել ավելի իրատես ու հավասարակշռված արտաքին քաղաքականություն։ Այն դրականորեն անդրադարձավ նաև Լեռնային Ղարաբաղի իրավիճակի վրա։ 1992 թ. օգոստոսին ԼՂՀ-ի տարածքում ռազմական գրություն մտցվեց։ Ստեղծվեց Պաշտպանության պետական կոմիտե, որի ձեռքում կենտրոնացվեց ամբողջ գործադիր իշխանությունը։ Այն մեծ աշխատանք ծավալեց երիտասարդ հանրապետության ռազմական և տնտեսական բոլոր կառույցների կենտրոնացման ու կանոնավոր մարտունակ բանակի ստեղծման ուղղությամբ։ 1993 թ. ընթացքում ԼՂՀ-ի բանակը ձեռնամուխ եղավ հանրապետության զավթված տարածքների ազատագրմանն ու հակառակորդի ռազմական հենակետերի ոչնչացմանը։ 1993 թ. գարնանից մինչև ամառ ընկած ժամանակահատվածում հայկական ուժերն ազատագրեցին Մարտակերտի շրջանի նվաճված տարածքների մեծ մասը, ոչնչացրեցին թշնամու խոշոր ռազմահենակետերը Ադրբեջանի Քելբաջարի, Աղդամի, Ֆիզուլու, Կուբաթլիի, Ջաբրայիլի և Զանգելանի շրջաններում։ Այս ամենը հանգեցրեց Ադրբեջանի իշխանությունների հերթական փոփոխության։ 1993 թ. ամռանը իշխանության գլուխ անցավ Ադրբեջանի կոմկուսի կենտկոմի նախկին առաջին քարտուղար, ԽՄԿԿ կենտկոմի քաղբյուրոյի նախկին անդամ Հեյդար Ալիևը, որը դեռևս ԽՍՀՄ-ի գոյատևման օրոք աչքի էր ընկնում իր ընդգծված հակահայկական գործունեությամբ։ Ժամանակ շահելու միտումով, նա համաձայնվեց Ռուսաստանի միջնորդությամբ զինադադար հաստատել և նույնիսկ տպավորություն ստեղծեց, թե դեմ չէ խաղաղարար բանակցություններ սկսել ԼՂՀ-ի ղեկավարության հետ։ Մինչդեռ իրականում Հ. Ալիևը իրար հաջորդող զինադադարներն օգտագործեց ոչ թե քաղաքական ճանապարհով Ղարաբաղյան հարցը լուծելու, այլ սեփական բարոյալքված բանակի մարտական ոգին բարձրացնելու, այն համալրելու ու վերակազմավորելու համար։ Օգտվելով որոշ երկրների երկերեսանի քաղաքականությունից, նրանց թողտվությամբ Ադրբեջանը մեծ քանակությամբ վարձկաններ հավաքագրեց ու զենք գնեց կամ էլ ստացավ։ Միաժամանակ, նոր թափով ծավալվեց հակահայկական քարոզչությունը, որը ադրբեջանական ժողովրդին «սրբազան պատերազմի» կոչ էր անում։ Դրան զուգընթաց, Ադրբեջանը միջազգային հանրությանը ներկայանում էր իբրև անմեղ զոհ, որի տարածքները գրավել էր «զավթիչ» Հայաստանը։ Ըստ էության, Ադրբեջանի իշխանությունները ոչ միայն շարունակում էին չընդունել ԼՂՀ-ի դոյության փաստը, այլև կրկին վերահաստատում էին ղարաբաղյան հիմնահարցի միայն ուժի դիրքերից լուծման իրենց որդեգրած քաղաքական գիծը։ Ընդ որում, իրենց իսկ սանձազերծած պատերազմի ողջ պատասխանատվությունը ադրբեջանցիները դնում էին Հայաստանի Հանրապետության վրա։ Հարկ է նշել, որ քարոզչության ասպարեզում Հայաստանն ակնհայտորեն զիջում էր Ադրբեջանին։

1993 թ. գեկտեմբերի 18-ին Ադրբեջանը մերժելով կրակը դադարեցնելու ռուսական հերթական նախաձեռնությունը, սկսեց աննախադեպ լայնածավալ հարձակում ղարաբաղյան ռազմաճակատի ողջ գծով։ Արցախի հարավում հարձակման համար օգտագործվեց Իրանի տարածքը։ Ադրբեջանցիների կողմում հայտնվել էին մեծ թվով նոր տանկեր և զրահամեքենաներ։ Թշնամու բանակը սպառազինված էր ամենաժամանակակից ամերիկյան, թուրքական ու չինական զինատեսակներով, ինչը վկայում էր զենքի և զինամթերքի խոշոր ներկրումների մասին՝ այն դեպքում, երբ ՄԱԿ-ի Ախ-ն արգելել էր սպառազինություն մատակարարել տարածաշրջան։ Ադրբեջանի բանակում կռվում էր 2000 աֆղան մոջահեդ, մոտ 1000 վարձկաններ Ռուսաստանից, Ուկրաինայից և ԱՊՀ-ի այլ երկրներից, շուրջ 500 ռազմական խորհրդականներ Թուր-

քիայից[31]։ Սակայն չնայած այս ամենին, հայկական ուժերը ոչ միայն կարողացան կասեցնել հակառակորդի կատաղի գրոհները, այլև արժանի հակահարված տվեցին նրան ռազմաճակատի ողջ երկայնքով։ Ծանր մարտերի ընթացքում թշնամին մեծ կորուստներ տվեց և չկարողացավ հասնել շոշափելի հաջողություններ։ Ռազմաճակատի սիծը ըստ էության չփոխվեց։ Բայց Ադրբեջանն ապացուցեց, որ արցախահայությունը գործ ունի կազմակերպված, լավ մատակարարվող ռազմական մի ուժի հետ, որն անընդհատ թարմացվելով՝ ճնշումը պահում էր ճակատային գծի ողջ 200 կմ-անոց երկայնքով։ Հարկ է նշել, որ միջազգային հանրության և տարբեր ժամանակներում իրենց խալալարար նախաձեռնություններով հանդես եկած բազմաթիվ միջազգային կազմակերպությունների ու երկրների լռության պայմաններում էր, որ Ադրբեջանը փաստորեն հնարավորություն էր ստացել զարգացնելու ռազմական գործողություններն ինչպես Արցախում, այնպես էլ Հայաստանի սահմանամերձ շրջաններում։ Թեև սեր հանրապետության իշխանություններն ամեն կերպ ձգտում էին թույլ չտալ, որպեսզի Հայաստանը ներքաշվի պատերազմի մեջ, սակայն այն ըստ էության ստանում էր պատերազմական իրավիճակում։ Ադրբեջանի ռազմական կազմավորումների կողմից մշտական հրահրվում և ոմրակոծվում էին Հայաստանի Հանրապետության սահմանամերձ բնակավայրերը, որոնք հանգեցնում էին մեծ ավերածությունների ու մարդկային զոհերի։ Դեռ 1992 թ. օգոստոսին, երկարատև շրջապատումից հետո նրանց հաջողվեց գրավել Ադրբեջանի տարածքում գտնվող, սակայն Հայաստանին պատկանող Արծվաշեն գյուղը։ Իրադարձությունների նման բնույթը հարկադրեց Հայաստանի Հանրապետության իշխանություններին ստանձնել իրենց կողմից առաջ քաշված՝ «մեր պաշտպանվածությունը անվտանգության մեջ է» թեզը և ուշադրությունը բևեռել սեփական զինված ուժերի լիարժեք կազմավորման ու ամրապնդման վրա։ 1992—1993 թթ. ընթացքում այս ուղղությամբ զգալի աշխատանք կատարվեց և ստեղծվեց ազգային մարտունակ բանակ։

Այսպիսով, 1990-ական թվականների սկզբներին հայ ժողովուրդը անտանելի ծանր ու դժվարին սոցիալ-քաղաքական պայմաններում կռվում էր իր պետականությունը։ Բոլոր զրկանքները, տառապանքներն ու կորուստները ապարավ լուռ ու մունջ՝ հանուն իր պետականության ամրապնդման, հանուն Լեռնային Ղարաբաղի հիմնահարցի արդարացի լուծման։

СОЦИАЛЬНО-ПОЛИТИЧЕСКОЕ ПОЛОЖЕНИЕ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ (1990—1993 гг.)

Р. Л. АЗИЗБЕКЯН

Резюме

23 августа 1990 г. принятием «Декларации о независимости Армении» новоизбранный Верховный Совет республики возвестил о начале процесса становления независимой государственности. В жизни армянского народа начался новый исторический этап. 1990—1993 гг. явились периодом новых тяжелых испытаний и трудностей. Война в Нагорном Карабахе приобрела более широкие масштабы и ожесточенный характер, что, естественно, в большой степени сказывалось на социально-политическом положении Армении. Еще более усилилась ее блокада. Углубился энергетический кризис. Резко снизился уровень жизни населения.

---

31 Հայաստանի Հանրապետություն, 11. II. 1994։

В рассматриваемый период происходили ощутимые сдвиги во внутриполитической жизни республики. Активизировалась деятельность различных партий, большинство которых стали оппозиционными.

С декабря 1991 г. начался процесс международного признания Республики Армения. В результате проблема Нагорного Карабаха постепенно стала предметом обсуждения авторитетных международных организаций, что не дало ощутимых результатов и не привело к миру в Арцахе.

Таким образом, в 1990—1993 гг. Республика Армения находилась в глубоком социально-политическом кризисе, который, кроме объективных причин, был обусловлен также субъективными факторами.